ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ/ՁԵՌՆԱՐԿԻ ՄՇԱԿՄԱՆ, ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/23

ք. Երևան «28» 07. 2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բաբայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (այսուհետ երկուսը միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Հանրակրթական նշանակության օբյեկտների շենքերի և շինությունների շահագործման և սպասարկման մեթոդական ուղեցույցի/ձեռնարկի» մշակման, տեղայնացման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը :

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 4 776 000 (չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը ներառյալ:

4.3 Վճարումը կիրականացվի պայմանագրով նախատեսված աշխատանքի արդյունքն ամբողջությամբ ընդունվելուց և Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ

բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից

վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Պայմանագրի վավերապայմաններում Կատարողի կողմից նշված բանկային տվյալները պետք է համապատասխանեն միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով պայմանագրի և/կամ որակավորման ապահովումների և դրանց կից վճարման պահանջագրերի բանկային տվյալներին:

7.14 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.15 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.16 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.17 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքների կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան
ք. Երևան, հանրապետության հրապարակ	ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի
կառավարական տուն 3	ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Ք. Երևան, Արմենակյան 125/3
աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ	Հ/Հ 1510005005540100
ՀՎՀՀ 02565827	ՀՎՀՀ 01516577
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Գ. Եղիազարյան	_____ Ա. Բաբայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«28» 07 2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/23 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	կատարման	
					հասցեն	ժամկետը
1	71241200/563	դրամ	4 776 000	1	ՀՀ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համապատասխան պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 320 օրացուցային օր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Հանրակրթական նշանակության օբյեկտների շենքերի և շինությունների շահագործման և սպասարկման մեթոդական ուղեցույցի/ձեռնարկի» մշակման, տեղայնացման աշխատանքների

1.	**Իրավիճակի համառոտ նկարագիրը**	«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանրակրթությունը՝ անձի ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որն իրականացվում է նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ կրթության հիմնական և լրացուցիչ ծրագրերով, որոնք նախատեսված են նախադպրոցական (մսուր և մանկապարտեզ) և դպրոցական հաստատությունների համար: Հայաստանի Հանրապետությունում առկա կրթական նշանակության շենքերից շուրջ 1400-ը՝ դպրոցական և 972-ը՝ նախադպրոցական շենքեր են: Կրթության ոլորտում, պետության առաջնային կարիքներին համապատասխան, անհրաժեշտ է ապահովել բոլոր նյութական արժեքների պահպանումը, այդ թվում՝ շինությունների պատշաճ պահպանումը շահագործման ողջ ժամկետի ընթացքում: Շահագործման ընթացքում շենքերը, դրանց կառուցվածքային տարրերը և ինժեներական համակարգի սարքավորումները բնակլիմայական, մարդու կենսագործունեության և այլ գործոնների ազդեցության տակ ձեռք են բերում ֆիզիկական և բարոյական մաշվածություն, կոնստրուկտիվ համակարգի վնասվածության աստիճան՝ աստիճանաբար նվազեցնելով սկզբնական շահագործողական հատկությունները: Շենքի պահպանմանն ուղղված անհետաձգելի միջոցառումները հաճախ իրականացվում են, երբ շենքի կոնստրուկցիաներն արդեն վնասվել են և զգալի դեֆորմացիաներ են ստացել՝ վատթարացնելով շենքի տեխնիկական վիճակը (ընդհուպ մինչև անբավարար կամ վթարային): ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 797-Ն որոշման համաձայն սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) տեսանկյունից առավել վտանգավոր դպրոցների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման (այդ թվում՝ վերանորոգման) ծրագրում ընդգրկվել է 368 դպրոց: Ներկայումս ՀՀ կառավարությունն իրականացնում է մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների պետական ծրագիրը՝ հատկացնելով աննախադեպ ֆինանսական միջոցներ: Հաշվի առնելով հանրակրթական նշանակության օբյեկտների շենքային պայմանների բարելավմանն ուղղված ՀՀ պետական և համայնքային բյուջեների միջոցների հաշվին իրականացվող ծախսատար և ծավալուն միջոցառումները՝ կառուցված և վերակառուցված

		շենքերի պահպանմանն ուղղված շահագործումն ու սպասարկումը պետք է իրականացվեն այնպես, որ ապահովվի կոնստրուկցիաների, ինժեներական համակարգերի և տեխնոլոգիական սարքերի գործառնական վիճակը, ներքին մակերեսների հարդարման բավարար մակարդակը, համալրվածությունը տեխնիկական սարքերով և գույքով, հաշմանդամություն ունեցող անձանց ներառականության ապահովման համար անհրաժեշտ լուծումները և դրանց ընթացիկ նորոգման ու սպասարկման ծառայությունները: Ներկայումս նորմատիվատեխնիկական փաստաթղթերի շրջանակներում բավարար ծավալով առկա չեն կարգավորումներ հանրակրթական նշանակության շենքերի անվտանգ և մատչելի շահագործման, սպասարկման պահանջներ, որոնք կիրառելի կլինեն շենքերն ու շինությունները շահագործողների և սպասարկման ծառայություններ մատուցող մասնագիտացված կազմակերպությունների կողմից:
2.	**Նորմատիվ փաստաթղթի (մեթոդական ուղեցույցի) մշակման (տեղայնացման) աշխատանքների համառոտ բնութագիրը**	**Հանրակրթական նշանակության օբյեկտների շենքերի և շինությունների շահագործման և սպասարկման մեթոդական ուղեցույցի** շրջանակներում պետք է մշակվեն (տեղայնացվեն). **Պահանջներ շենքերն ու շինությունները շահագործող կազմակերպությունների նկատմամբ՝** 1. այդ շենքերի և շինությունների սպասարկման և շահագործման մասնագիտացված (out sourse-ի սկզբունքով) ծառայություններ ձեռք բերելու ընթացակարգի, ծառայությունների մատուցման պայմանագրի ձևավորման, դրանում պարտավորությունների և իրավունքների մասով հիմնական պահանջների նկարագրության, ծառայությունների ժամկետի սահմանման և պայմանագրի կնքման վերաբերյալ, 2. իր կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարման, ձեռք բերվող ծառայությունների համար ֆինանսական միջոցների նախապես ծրագրման վերաբերյալ: **Պահանջներ աշխատանքը կատարողի նկատմամբ** 1. ինժեներական հաղորդակցուղիների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, կոյուղու, գազամատակարարման, էլեկտրամատակարարման, օդափոխության, հրդեհաշիջման, տեսահսկման համակարգերի ուսումնասիրության և տեխնիկական սպասարկման, դրա պարբերականության, ժամկետների, մասնագիտական ռեսուրսի ներգրավման, կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվության ու լրացուցիչ գրավոր առաջարկների ներկայացման վերաբերյալ, 2. ներքին մակերեսների բավարար հարդարման, կահավորման ու շահագործման մատչելիության, էներգաարդյունավետ համակարգերի և սարքերի օգտագործման ուսումնասիրության և դրանց տեխնիկական անվտանգության հրատապ առաջարկների ներկայացման վերաբերյալ, առկա ոչ էական թերությունների վերացման պարտավորությունների վերաբերյալ, 3. ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի, սարքերի և սարքավորումների անխափան աշխատանքի ապահովման, կանոնավոր կանխարգելիչ սպասարկման, վթարային վերանորոգումների՝ հիմնականում ցածր և միջին ռիսկայնության աշխատանքների, իսկ ըստ անհրաժեշտության նաև հիմնանորոգումների և վերակառուցումների և տեխնիկական վիճակի հետազննման վերաբերյալ, 4. ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան քաղաքաշինական օբյեկտների սպասարկման ծառայությունների մատուցման վերաբերյալ, 5. քաղաքաշինության բնագավառի որակավորված տարբեր մասնագետների ներգրավման և անհրաժեշտ քանակով մասնագիտական ռեսուրսի առկայության վերաբերյալ, 6. տարեկան կտրվածքով նախատեսվող աշխատանքի վերաբերյալ միջոցառումների ծրագրի և ժամանակացույցի մշակման, պայմանագրով նախատեսված դեպքերում՝ նաև գոյություն ունեցող շենքի տեխնիկական անձնագրի կազմման վերաբերյալ, 7. արդի նորմերով սահմանվող երկրաշարժադիմացկունության, քաղաքացիական պաշտպանության, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության, օդափոխության, էներգաարդյունավետության համակարգերի, կլիմայի

		փոփոխության հետ հարմարվողականության այլ առաջնահերթ միջոցառումների վերաբերյալ գրավոր առանձին առաջարկների ներկայացման մասով: **Շենքի տեխնիկական սպասարկման և ուսումնասիրության ենթակա կառուցվածքներ, կահավորանք** - կոնստրուկտիվ համակարգեր, - հիմքեր, կրող կոնստրուկտիվ համակարգի տարրեր, պատեր, միջհարկային ծածկեր, վերնածածկ, հատակներ և առաստաղներ, տանիք և տանիքածածկ, տանիքներից ջրահեռացման համակարգեր և այլն, - **արտաքին պատող կոնստրուկցիաներ՝ պատեր, դռներ, պատուհաններ և այլն,** - աստիճաններ, աստիճանավանդակներ, տարհանման ուղիներ, - **ինտերիեր և ներքին հարդարանք, կահավորում, խելամիտ հարմարեցումներ հաշմանդամություն ունեցող անձանց համար,** - **գործառնական տարածքներ՝ դասասենյակներ, վարչական աշխատասենյակներ, տնտեսական, մարզական և այլ տարածքներ,** - **սանիտարական հանգույցներ բոլոր հարկաբաժիններում, այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց համար,** - **նկուղ, տեխնիկական հարկ, ձեղնահարկ, վերելակներ և վերելակի անվտագության սարքեր, քաղաքացիական պաշտպանության պաշտպանական սենքեր,** - **ինժեներական հաղորդակցուղիների համակարգեր՝ էլեկտրամատակարարման, այդ թվում վերականգնվող էներգիայի աղբյուրներից սնվող, գազամատակարարման, ջրամատակարարման, կապի, օդափոխության, հրդեհաշիջման, տեսահսկման, օդափոխության, սառնամատակարարման և էներգաարդյունավետության համակարգեր,** - **կահավորանք և կահավորման պարագաներ,** - **բակային տարածքներ, խաղահրապարակներ, անցուղիներ, խաղասարքեր (բարեկարգում, կանաչապատում, ոռոգման համակարգ, հարմարեցումներ հաշմանդամություն ունեցող անձանց համար և այլն):** Նախագծի մշակման շրջանակներում անհրաժեշտ է վերոգրյալի մասով դիտարկել զարգացած երկրների փորձը և Նախագծում ներառել շենքերի ու շինությունների կազմի, կառուցվածքի և կահավորման, զբաղեցված տարածքների համալիր բարեկարգման միջոցառումների, արտաքին և ներքին ինժեներական (ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրամատակարարման, լուսավորության, գազամատակարարման, ջրահեռացման, օդափոխության, օդորակման, հակահրդեհային ազդանշանման, տեսահսկման, կապի համակարգեր և այլն) ինչպես նաև տեխնիկական անվտանգության վերաբերյալ համապատասխան պահանջներ: Կանոններն անհրաժեշտ է մշակել. - ՀՀ ստանդարտացման փաստաթղթերի ազգային համակարգի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, - քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարական նորմերին և կանոններին համապատասխան՝ ԵՄ անդամ պետությունների փորձի ուսումնասիրության արդյունքներով, ԵՄ ստանդարտների համադրությամբ, - 2011 թվականի մարտի 9-ին Եվրամիության խորհրդի կողմից ընդունված N305/2011/EEC կանոնակարգով սահմանված շինարարական արտադրանքի անվտանգության պահանջների շրջանակներում:
3.	**Նորմատիվ փաստաթղթի (մեթոդական ուղեցույցի) մշակման (տեղայնացման) աշխատանքների հիմնավորումը և պահանջները**	**Հիմնավորում** «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ կետի 37-րդ ենթակետ, 2011 թվականի մարտի 9-ին Եվրամիության խորհրդի կողմից ընդունված N305/2011/EEC կանոնակարգի պահանջներ, ԵՄ-Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագիր: **Ուղեցույցին առնչվող հիմնական նորմատիվ իրավական ակտերը** - «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, - «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք,

